

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ՆՁՊ

(առարկա)

ԹԵՄԱ՝ Ռազմական տեղագրություն

Կազմեց՝ Հենրիկ Միրզոյան Գառնիկի

(անուն, ազգանուն, հայրանուն)

«Եղվարդի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ

(դպրոցի անվանումը)

Ղեկավար՝ Վ. Ստեփանյան

«Կապանի N2 ավագ դպրոց» ՊՈԱԿ

(վերապատրաստող կազմակերպության անվանումը)

Կապան 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	3
<i>ՈԱԶՄԱԿԱՆ ՏԵՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ</i>	
ԳԼՈՒԽ 1. ՏԵՂԱՆՔԸ ԵՎ ՆՐԱ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՐՏՈՒՄ	4
ԳԼՈՒԽ 2. ՏԵՂԱՆՔԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՐՏԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՎՐԱ.	6
ԳԼՈՒԽ 3. ՌԵԼԻԵՖԻ ԵՎ ՏԵՂԱՆՔԻ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՊԱՏԿԵՐՈՒՄԸ ՔԱՐՏԵԶՈՒՄ...9	
ԳԼՈՒԽ 4. ՏԵՂԱՆՔԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ՁԵՎԵՐԸ	12
ԳԼՈՒԽ 5. ԱԶԻՄՈՒՏՆԵՐՈՎ ՇԱՐԺՄԱՆ ԵՎ ՔԱՐՏԵԶՈՎ ՏԵՂԱՆՔՈՒՄ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՌԱՆՁՆԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....	14
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ	18
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ	19

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սույն աշխատանքը նվիրված է ռազմական տեղագրության թեմայի ուսումնասիրությանը: Ռազմական տեղագրությունը ռազմական ուսուցման առարկա է, որը մարտական գործողությունների վարման նպատակով ուսումնասիրում է տեղանքը, սահմանում քարտեզի վրա դրանց նշման եղանակներն ու միջոցները: Այն սովորեցնում է մարտական իրադրության տարբեր պայմաններում տեղանքում կողմնորոշվելու եղանակները, հրաձգության, հրետանային, ինժեներական և այլ խնդիրների լուծմանը նպաստող անհրաժեշտ տվյալներ ստանալու համար չափումներ կատարելու եղանակները, մարտական գործողությունների տեղագրական ապահովման մեթոդները:

Ռազմական տեղագրությունը համարվում է մարտական պատրաստության կարևորագույն առարկաներից, քանի որ միայն տեղանքի մարտավարական հատկանիշների և պատերազմական դաշտի ճիշտ գնահատմամբ ու օգտագործմամբ է հնարավոր դառնում արդյունավետ կազմակերպել ու վարել մարտական գործողությունները:

Ռազմական տեղագրությունը հիմնված է քարտեզագրության և աշխարհագրության պատմության տվյալների վրա, բայց և այնպես, ի տարբերություն հասարակ քարտեզագրության, այն չի կիրառվում քաղաքացիության մեջ, այլ բացառապես զինված ուժերում:

Առանց տեղանքի տարատեսակների, դրանց մարտավարական հատկանիշների իմացության, ինչպես նաև տեղանքում կողմնորոշվելու տեղագրական քարտեզ կարդալու, հեռավորությունը որոշելու և տեղանքը գնահատելու կարողության հնարավոր չէ հաղթել ժամանակակից համազորային մարտում:

Հաշվի առնելով ռազմական տեղագրության նշանակությունը և կարևորությունը՝ ընտրվել սույն թեման՝ համապարփակ անդրադարձ կատարելով վերջինիս նշված աշխատանքի շրջանակներում:

ՌԱԶՄԱԿԱՆ ՏԵՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԳԼՈՒԽ 1

ՏԵՂԱՆՔԸ ԵՎ ՆՐԱ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՐՏՈՒՄ

Տեղանքը երկրի մակերևույթի որոշակի տեղամաս է, որի վրա անցկացվելու են մարտական գործողություններ: Երկրի մակերևույթի անհարթությունների ամբողջությունը կոչվում է տեղանքի ռելիեֆ, իսկ նրա վրա տեղաբաշխված բոլոր առարկաները, որոնք ստեղծված են մարդու կամ բնության կողմից, կոչվում են տեղանքի առարկաներ:

Ռելիեֆը և տեղանքի առարկաները տեղանքի հիմնական տեղագրական տարրերն են: Տեղանքի տեղագրական տարրերը որոշում են նրա մարտավարական հատկությունները, քանի որ դրանք ազդում են մարտի կազմակերպման և անցկացման, մարտում մարտական տեխնիկայի օգտագործման, դիտարկման, կրակի վարման, կողմնորոշման և քողարկման պայմանների վրա:

Տեղանքի մարտավարական և պաշտպանական հատկությունների ճիշտ ու բազմակողմանի գնահատումը և դրանց հմուտ օգտագործումը, մարտական գործողություններում հաջողության հասնելու հիմնական պայմաններն են: Այդ իսկ պատճառով յուրաքանչյուր զինվոր պարտավոր է կատարելագործել իր գիտելիքները տեղանքի մասին, մշակել դրանք մարտում հմտորեն օգտագործելու ունակությունները: Այդպիսի գիտելիքները և ունակությունները ձեռք են բերվում ռազմական տեղագրության ուսումնասիրման ընթացքում:

Ռազմական տեղագրությունը զորքերում ուսուցանվող զինվորական գիտություն (առարկա) է, որի բաղկացուցիչ մասերից են տեղանքի ուսումնասիրման մեթոդների մշակումը, կողմնորոշումը և դաշտային չափումների անցկացումը ռազմական գործողությունների նախապատրաստման ու անցկացման նպատակով:

Ռազմական գործողությունների իրականացումը եղանակի տարբեր պայմաններում, օրվա ցանկացած ժամին, տեղաքի բազմազան պայմաններում բարձր պահանջներ է առաջադրում զորքերին՝ տեղանքի ուսումնասիրման, գնահատման և օգտագործման առումով:

Յամաքային զորքերի բարձր տեխնիկական հագեցվածությունը հատուկ ուշադրություն է պահանջում ռելիեֆի, բնահողի բնութագրի և տեղանքի բուսական ծածկույթի ուսումնասիրման նկատմամբ:

Ռազմական գործողությունների դեպքում ռելիեֆը ծառայում է որպես թաքստարան՝ հակառակորդի ռմբակոծությունից պաշտպանվելու համար, անմիջականորեն ազդում է զորքի տեղաշարժման և տեղանքի անցանելիության վրա:

Ժամանակակից մարտում զինված ուժերի հաղթանակը մեծապես կախված է հենց ռազմական տեղագրության ուսումնասիրությունից, և զինծառայողները պետք է ոչ միայն տիրապետեն տեղանքին, այլև պետք է իմանան տեղանքի տարատեսակները, դրանց մարտավարական հատկանիշները, պետք է կարողանան ինքնուրույն կողմնորոշվել տեղանքում, կարդալ տեղագրական քարտեզը, որոշել հեռավորության սահմաններն ու գնահատել տեղանքը: Տեղանքի ուսումնասիրումն ընդգրկում է նաև զինված ուժերի անցնելիք ճանապարհահատվածի աշխարհագրական դիրքի և կլիմայական պայմանների գնահատումը:

Ռազմական տեղագրությունը ուսումնասիրում է նաև մարտական գործունեության ապահովման համար դաշտային չափումների, հրամանատարների՝ աշխատանքային քարտեզների վարման և գրաֆիկական մարտական փաստաթղթերի, քարտեզների մշակման եղանակներն ու միջոցները:

**ՏԵՂԱՆՔԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՐՏԻ
ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՎՐԱ**

Ռեփեֆը երկրի ֆիզիկական մակերևույթի ձևն է՝ համեմատած նրա մակարդակային մակերևույթի հետ, այսինքն՝ երկրագնդի մակերևույթի ուռուցիկ և գոգավոր անհարթություններն են, որոնք բնորոշում են առանձին կետերի փոխադարձ դիրքը միմյանց և ծովի մակերևույթի նկատմամբ:

Ըստ ռեփեֆի բնույթի, տեղանքը լինում է հարթավայրային, բլրային և լեռնային, իսկ ըստ հողաբուսական ծածկույթի բնույթի՝ անտառային, ճահճային և անապատատափաստանային:

Ռեփեֆի և հողաբուսական ծածկույթի համադրումից առաջանում են տեղանքի լեռնաանտառային, անտառաճահճային և այլ տեսակներ:

Հարթավայրային տեղանքը հարթ կամ բլրապատ տեղամաս է: Բլուրների լանջերի թեքությունը 1-2° ավել չէ: Հարթավայրային տեղանքը կարող է լինել բաց, եթե նրա վրա չկան տեղանքի առարկաներ, կամ փակ, եթե այդտեղ առկա են անտառներ, թփուտներ, բնակավայրեր:

Գետերի, լճերի և ճահիճների մեծաքանակության դեպքում հարթավայրային տեղանքը կտրված, մասնատված տեսք է ստանում: Եվ եթե այն քիչ է մասնատված, մատչելի է բոլոր ցամաքային զորատեսակների տեղաշարժերի և մարտական գործողությունների համար: Կավային, ավազակավային, կավաավազային և տորֆային տեղանքը բարձր խոնավության պայմաններում դժվարացնում է տեղաշարժը և դառնում համարյա անանցանելի:

Բլրոտ տեղանքն ունի բարձրություններ և իջվածքներ, որոնք չեն խոչընդոտում մարտական տեխնիկայի և տրանսպորտի բոլոր տեսակների տեղաշարժերին: Այստեղ գերակշռում են բլուրները, լեռնահովիտները, հազվադեպ ձորակները: Բլուրների լանջերի թեքությունը չի գերազանցում 2-3°-ից: Բլրային տեղանքը նպաստում է քողարկմանը, դիտարկման կետերի և կրակային դիրքերի ընտրմանը:

Լեռնային տեղանքում գերակշռում են լեռները, լեռնաշղթաները, կիրճերը և լեռնահովիտները: Դրանց լանջերը, որպես կանոն, թեք են և ժայռոտ: Ճանապարհների բացակայության դեպքում այստեղ դժվարանում է ինչպես

երթևեկությունը, այնպես էլ դիտարկումը, կրակավարումը ու կողմնորոշումը: Դրա հետ մեկտեղ լեռնային տեղանքն ապահովում է զորքերի շարժման և տեղաբաշխման քողարկվածությունը: Բացի այդ, լեռնային տեղանքը կարող է պաշտպանել զորքերին ատոմային պայթյունի ժամանակ առաջացած ճառագայթումից և թուլացնել հարվածային ալիքի ուժը:

Անտառային տեղանքը երկրի մակերևույթի այնպիսի տեղամաս է, որի կեսից ավելին ծածկված է անտառներով: Ըստ ձևի անտառները լինում են միաշարք, որոնք չունեն մանրանտառ (թփուտներ), և բազմաշարք, որտեղ ծառերը տնկված են տարբեր ժամանակահատվածներում: Ըստ սաղարթի խտության ու թավության անտառները լինում են շատ խիտ, խիտ և նոսր: Ըստ տեսակի դրանք լինում են լայնատերև, փշատերև և խառը:

Ճահճային տեղանքը երկրի մակերևույթի այնպիսի տեղամաս է, որտեղ կան չափից ավելի խոնավ հողեր: Ճահճային տեղանքն իր հերթին բաժանվում է ճահիճների և ճահճացված հողերի: ճահիճը խոնավացած տեղամաս է տորֆի 30 սմ շերտով՝ խոնավ վիճակում: Տորֆի 50 սմ -ից ավել շերտի դեպքում ճահիճները կոչվում են տորֆուտներ:

Ավելցուկային խոնավության այնպիսի տեղամասերը, որտեղ տորֆի շերտը 30 սմ-ից քիչ է կամ ընդհանրապես չկա, կոչվում են ճահճացած հողեր: Ճահճային տեղանքի առանձնահատկություններից են բնակավայրերի բացակայությունը կամ թույլ բնակեցվածությունը, ճանապարհային վատ պայմանները, դժվար անցանելի և անանցանելի տեղամասերի առկայությունը: Դա խանգարում է զորքերի և մարտական տեխնիկայի տեղաշարժին, ինչպես նաև մատակարարմանը և էվակուացիային (տարհանմանը):

Անապատատափաստանային տեղանք են համարվում չոր անապատները, կիսաանապատները և տափաստանները: Դա խիստ չորային տեղանք է՝ մայրցամաքային կլիմայով: Նրան բնորոշ են լայնատարած, անտառազուրկ, քիչ բնակեցված տարածությունները, ճանապարհազրկությունը, ջրի պակասությունը և հողաբուսական յուրահատուկ պայմանները: Բնահողի բնույթով առանձնացնում են տափաստանի հետևյալ տեսակները՝ ավազային, կավային, անտառային, քարային, աղուտային: Առավել լայն տարածում ունեն ավազային տափաստանները:

Չնայած տափաստանի բաց տարածությունը հարմար է զորաշարժի համար, սակայն մարտական խնդիրների լուծմանը բացասաբար է անդրադառնում բնական արգելքների բացակայությունը, որը դժվարացնում է պաշտպանությունը և զորքերի քողարկումը: Իսկ տեղանքի ռեսուրսների (ջուր, վառելիք) սակավությունը դժվարացնում է զորքերի մատակարարման գործը: Աչքի զարնող տեղանքի առարկաների բացակայությունը դժվարացնում է կողմնորոշումը և նպատականշումը:

ԳԼՈՒԽ 3

ՌԵԼԻԵՖԻ ԵՎ ՏԵՂԱՆՔԻ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՊԱՏԿԵՐՈՒՄԸ ՔԱՐՏԵՉՈՒՄ

Տեղագրական քարտեզներում ռելիեֆը պատկերվում է հորիզոնականներով: Հորիզոնականը համապատասխան անհարթության ուրվագիծը պատկերող ներփակ գիծ է, որի վրա բոլոր կետերը գտնվում են միևնույն բարձրության վրա: Ռելիեֆի պատկերումը հորիզոնականներով պարզաբանելու համար պետք է պատկերացնել մի կղզի լեռան տեսքով, որը կամաց-կամաց ծածկվում է ջրով: Ենթադրենք՝ ջրի մակարդակը ինչ-որ հավասար ժամանակահատվածներում կանգնեցվում է: Այդպիսի յուրաքանչյուր մակարդակ ունենում է իր ներփակ ափագիծը, որի բոլոր կետերն ունեն նույն բարձրությունը: Այդ գծերը կարելի է դիտել որպես իրար զուգահեռ հորիզոնական հարթություններով հատված լեռան հետագիծ: Բոլոր ներփակ գծերը ծովի մակերևույթի մակարդակով անցկացնելով և որոշակի մասշտաբով քարտեզում պատկերելով կստանանք լեռան պատկերը կոր գծերով հորիզոնականներով: Քարտեզում հորիզոնականների թվով կարելի է որոշել մեկ կետի գերազանցումը մյուսի նկատմամբ, իսկ հորիզոնականների միջանկյալ հեռավորությամբ որոշել լանջերի թեքությունը:

Քարտեզում հորիզոնականները, որոնք համապատասխանում են սահմանված հատվածի բարձրությանը, նշվում են հոծ գծով և կոչվում են հիմնական կամ հոծ հորիզոնականներ:

Յուրաքանչյուր մասշտաբի քարտեզի համար ռելիեֆի հատվածքի բարձրությունը հաստատուն է:

Քարտեզում բոլոր հորիզոնականները տպվում են դարչնագույնով: Հատվածքի հիմնական բարձրությունը նշվում է քարտեզի շրջանակի ներքևի մասում:

Երկրի մակերևույթի կետերի բարձրությունը Բալթիկ ծովի մակարդակից կոչվում է բացարձակ: Մեկ կետի գերազանցումը մեկ այլ կետի կամ ինչ-որ մակերևույթի նկատմամբ, կոչվում է հարաբերական բարձրություն:

1:500 000 և 1:1 000 000 մասշտաբի քարտեզներում լեռնային ռելիեֆի լանջերի անհարթությունները ավելի պատկերավոր արտահայտելու համար դրանք լրացվում են ստվերարկումով, որը ավելի ակնառու է դարձնում անհարթությունների դասավորվածությունը:

1:500 000 մասշտաբի քարտեզներում լեռնային ռելիեֆի պատկերումը լրացվում է նաև վերին շերտերի գունավորումով հետևյալ օրինաչափությամբ, որքան բարձր, այնքան մուգ: Ներկն ավելի է մգանում յուրաքանչյուր 300, 500 կամ 1000 մ-ից:

Ջառիթափերը, լանջերը, բլուրները, ձորակները և ա յլն քարտեզներում նշվում են հատուկ պայմանական նշաններով: Այդ դեպքում ռելիեֆի իրական պատկերները (զառիթափերը, լանջերը, քարաթափվածքները), ինչպես նաև հորիզոնականները, քարտեզներում նշվում են դարչնագույն, իսկ արհեստական պատկերները (փլուզումները, փորվածքները և այլն) սև գույնով:

Պայմանական նշանների կողքին եղած գրառումները ցույց են տալիս դրանց բարձրությունը կամ խորությունը մետրերով: Եթե թվային գրառումը տրված է կոտորակի տեսքով, ապա համարիչը ցույց է տալիս լայնությունը, իսկ հայտարարը՝ խորությունը:

Մարդու կամ բնության ստեղծած տեղանքի բոլոր առարկաները կոչվում են տեղանքի առարկաներ: Դրանք քարտեզներում պատկերվում են տեղագրական պայմանական նշաններով, որոնք հորիզոնականների հետ զուգակցված հնարավորություն են տալիս ստեղծել տեղանքի իրական պատկերը:

Քարտեզներում պատկերելիս տեղանքի բոլոր առարկաները բաժանվում են հետևյալ խմբերի.

1. Բուսական ծածկույթ և բնահող,
2. Ջրագրություն,
3. Բնակավայրեր,
4. Արդյունաբերական, գյուղատնտեսական և սոցիալ-կուլտուրական օբյեկտներ,
5. ճանապարհային ցանց,
6. Վարչական սահմաններ և ցանկապատներ,
7. Տեղանքի առանձին առարկաներ կողմնորոշիչներ:

Ըստ իրենց նշանակության և հատկությունների պայմանական նշանները բաժանվում են 3 խմբի.

1. Մասշտաբային կամ ուրվագծային պայմանական նշաններ, որոնք օգտագործվում են քարտեզի մասշտաբում տեղանքի արտահայտելի առարկաները պատկերելու համար (անտառ, բնակավայր, բանջարանոց և այլն):

2. Արտամասշտաբային պայմանական նշաններ, որոնք օգտագործվում են տեղանքի այն փոքր առարկաները պատկերելու համար, որոնք անհնար է արտահայտել քարտեզի մասշտաբում (ճանապարհի լայնություն, աղբյուր, ջրհոր, առանձին կառույցներ և այլն):

3. Բացատրական պայմանական նշաններ, որոնք օգտագործվում են տեղանքի առարկաների լրացուցիչ բնութագրման և դրանց տարատեսակները ցույց տալու համար: Դրանք լինում են թվային կամ տառային:

ԳԼՈՒԽ 4

ՏԵՂԱՆՔԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ՁԵՎԵՐԸ

Յուրաքանչյուր հրամանատար և զինվոր պարտավոր է մանրակրկիտ ուսումնասիրել և հնարավորին չափ ամբողջությամբ իմանալ այն տեղանքը, որտեղ պետք է ընթանան մարտական գործողությունները: Դա անհրաժեշտ է տեղանքում անսխալ կողմնորոշվելու, ինչպես նաև տեղանքի դրական կողմերը մարտի ժամանակ լրիվ օգտագործելու համար:

Տեղանքի ուսումնասիրման ամենատարածված ձևերն են

1. Տեղանքի հետախուզումը (անմիջական դիտումը և հետախուզումը):

Այս եղանակը հնարավորություն է տալիս ամենաճշգրիտ տվյալները ձեռք բերել ռելիեֆի և տեղանքի առարկաների, անցանելիության և պաշտպանական հատկությունների, դիտարկման պայմանների, կրակի վարման, կողմնորոշման և քողարկման մասին: Թերությունն այն է, որ հնարավոր չէ կարճ ժամանակահատվածում ուսումնասիրել մեծ տեղամասեր:

2. Տեղանքի ուսումնասիրումը քարտեզի միջոցով: Ժամանակակից խոշոր մասշտաբի քարտեզները հնարավորություն են տալիս ճիշտ պատկերացնել տեղանքի առարկաները և դրանց բնորոշ կողմերը: Քարտեզի միջոցով հնարավոր է ժամանակին, արագ և մանրակրկիտ ուսումնասիրել տեղանքի խոշոր տեղամասեր և կատարել անհրաժեշտ չափումներ ինչպես սեփական, այնպես էլ թշնամու դիրքերում: Տեղանքի ուսումնասիրման այս եղանակը ամենատարածվածն է: Քարտեզի միջոցով ուսումնասիրման թերի կողմն այն է, որ երբեմն չեն երևում տեղանքի սեզոնային և այլ բնույթի փոփոխությունները, որոնք եղել են գծահանման ժամանակ: Տեղանքի մասին անհրաժեշտ տվյալները պետք է ճշտել և լրացնել օդալուսանկարահանման միջոցով:

3. Տեղանքի ուսումնասիրումը օդալուսանկարներով: Դրանք քարտեզի հետ համեմատած տալիս են ավելի թարմ և ստույգ տեղեկություններ տեղանքի մասին: Դրանցով կարելի է մանրակրկիտ ուսումնասիրել տեղանքը, թշնամու պաշտպանական կառույցների տեղադիրքը և բնույթը, նրա կրակային միջոցները, կենդանի ուժի և մարտական տեխնիկայի տեղաբաշխումը: Միաժամանակ օդալուսանկարները լրիվ տեղեկություն չեն տալիս տեղանքի մասին (ճահիճների անցանելիությունը, բնահողիս վիճակը, գետերի խորությունը, ջրերի հոսքի

արագությունը և այլն): Տեղանքի ուսումնասիրման համար լրացուցիչ տեղեկություն կարող է տալ տեղի բնակիչների տեղեկատվությունը և գերիների հարցաքննումը:

ԳԼՈՒԽ 5

**ԱԶԻՄՈՒՏՆԵՐՈՎ ՇԱՐԺՄԱՆ ԵՎ ՔԱՐՏԵԶՈՎ ՏԵՂԱՆՔՈՒՄ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՌԱՆՁՆԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Մագնիսական սլաքի ցույց տված այն ուղղությունը, որն անցնում է կանգնած կետով կոչվում է մագնիսական միջօրեական: Մագնիսական միջօրեականի հյուսիսային ուղղությունից ժամացույցի սլաքի ուղղությամբ մինչև նպատակակետն ընկած հորիզոնական անկյունը կոչվում է մագնիսական ազիմուտ: Ազիմուտով շարժվել նշանակում է որոշել շարժման ուղղությունը և այն հեռավորությունը, որը հարկավոր է անցնել նախանշված կետին հասնելու համար (հեռավորությունները տեղանքում, ըստ իրադրության և լուծվող խնդիրների բնույթի, չափվում են աչքաչափով, մեքենայի վազքաչափով, տեղանքի առարկաների անկյունային և գծային չափերով, քայլերով, լույսի և ձայնի արագությունների հարաբերակցությամբ, լսողությամբ, տեղաշարժման արագությամբ և ժամանակով, տեղանքում երկրաչափական կառուցումներով):

Ազիմուտներով շարժման եղանակը լայնորեն կիրառվում է կողմնորոշիչներից աղքատ տեղանքում, գիշերը և սահմանափակ տեսանելության դեպքում: Դրա էությունը կայանում է շարժման ժամանակ տեղանքում մագնիսական ազիմուտով տրված ուղղության և այդ ուղղությամբ հեռավորության պահպանման մեջ: Ուղղությունը պահպանում են կողմնացույցի, իսկ հեռավորությունը զույգ քայլերի կամ մեքենայի սպիդոմետրի օգնությամբ: Ազիմուտներով շարժվելու համար անհրաժեշտ է քարտեզով նախապես որոշել ելակետային տվյալները, երթուղու վրա շրջադարձի կետերի միջև շարժման ուղղությունների մագնիսական ազիմուտները և հեռավորությունները այդ կետերի միջև: Ելակետային տվյալները ձևակերպվում են սխեմայի տեսքով կամ գրանցում են աղյուսակում:

Քարտեզով տեղանքում կողմնորոշվելը. Կողմնորոշվել տեղանքում մարտական պայմաններում նշանակում է որոշել սեփական տեղադիրքը և շարժման կամ գործողությունների անհրաժեշտ ուղղությունը հորիզոնի կողմերի շրջապատող տեղանքի առարկաների, սեփական ու հակառակորդի զորքերի վերաբերյալ: Կողմնորոշման էությունը կազմում է երեք հիմնական տարր.

- տեղանքի ճանաչողությունը նրան բնութագրող հատկանիշներով ու կողմնորոշիչներով,

- սեփական կանգնման կետի (դիրքատեղի), դիտարկվող նպատակակետերի ու օբյեկտների տեղադիրքերի որոշումը և հայտնաբերումը,
- տեղանքում անհրաժեշտ շարժման կամ գործողությունների ուղղությունների որոշումը և պահպանումը:

Տարբեր աստիճանի հրամանատարների բոլոր գործողություններն անխուսափելիորեն առնչվում են տեղանքում կողմնորոշվելուն, քանի որ առանց դրա անհնարին են ստորաբաժանումներին ու կրակային միջոցներին մարտական խնդիրների առաջադրումը, նպատականշումը, հակառակորդի ու տեղանքի հետախուզման արդյունքների արտացոլումը քարտեզում և մարտի ընթացքում ստորաբաժանումների գործողությունների կառավարումը:

Կողմնորոշումը տեղանքում հրամանատարներն ու անձնակազմը պետք է կատարեն պարբերաբար մարտական խնդրի (առաջադրանքի) նախապատրաստման ու իրագործման ընթացքում:

Տեղագրական քարտեզն անձանոթ տեղանքում կողմնորոշվելու հիմնական միջոցն ու վստահելի ուղեցույցն է, որով արագ և ճշգրիտ որոշվում է սեփական ու նպատակակետերի տեղադիրքերը, հստակ պահպանվում առաջադրված կամ նշված շարժման երթուղին, ինչն առավել կարևորվում է ժամանակակից մարտում, երբ ստորաբաժանումները մարտական առաջադրանքներն ու խնդիրները լուծելու համար հաճախ գործում են ինքնուրույն, լինի գիշեր թե ցերեկ՝ մեծ հեռավորությունների արագ տեղափոխություններ կատարելով հանդերձ:

Կողմնորոշման կարևոր խնդիրն է իրադրության ցանկացած պայմաններում (մարտի ընթացքում, հետախուզությունում, երթարշավում և այլն) հանձնարարված շարժման կամ գործողությունների ուղղության հայտնաբերումը և պահպանումը:

Կողմնորոշումը քարտեզով ներառում է քարտեզի կողմնորոշումը, համեմատումը տեղանքի հետ մոտակա կողմնորոշիչների ու ռելիեֆի դետալների օգտագործմամբ, սեփական տեղադիրքի (կանգնման կետի) որոշումը: Այնուհետև, օգտագործելով հեռավոր կողմնորոշիչներն ու ռելիեֆի դետալները, համոզվում են տեղանքում կողմնորոշման ճշտության մեջ:

Քարտեզը կողմնորոշել նշանակում է տեղադրել այնպես, որ դրա շրջանակի հյուսիսային կողմն ուղղված լինի դեպի հյուսիս, իսկ մյուսները համապատասխանաբար հարավ, արևելք և արևմուտք: Այդ դեպքում բոլոր ուղղությունները, որոնք դիտվում են կանգնած տեղից դեպի շրջապատող տեղանքի առարկաները, պետք է համապատասխանեն քարտեզային ուղղություններին: Ըստ առաջադրված խնդրի լուծման՝ քարտեզը կարող է կողմնորոշված լինել մոտավոր կամ ճշգրիտ:

Քարտեզի մոտավոր կողմնորոշումը կատարվում է աչքաչափով: Սկզբում որոշվում է կանգնած տեղը, որից հետո քարտեզը շրջում են այնպես որ դեպի տեղանքի առարկաների ուղղությունները թե՛ տեղանքում (ճանապարհ գետ, կաճան) և թե քարտեզում համընկնեն:

Քարտեզն ավելի ճշգրիտ կարելի է կողմնորոշել կողմնացույցով և դեպի տեղանքի առարկաները տանող ուղղություններով:

Տեղանքի գծերով քարտեզի կողմնորոշման համար պետք է կանգնել տեղանքի քարտեզում նշված որևէ գծային կողմնորոշիչի մոտ (ճանապարհի ուղիղ հատված, կաճան, էլեկտրահաղորդման գիծ): Քանոնը (մատիտը) համադրելով այդ գծին պետք է քարտեզը շրջել այնպես, որ քանոնի ուղղությունը համընկնի տեղանքի նույն ուղղությանը:

Դրանից հետո անհրաժեշտ է ստուգել, որ ուղղությունները դեպի տեղանքի առարկաները, տեղաբաշխված այդ գծից ձախ և աջ, համընկնեն տեղանքի համապատասխան ուղղություններին:

Կողմնացույցով քարտեզի կողմնորոշումն ընդհանրապես կատարվում է փակ կամ կողմնորոշիչներով աղքատ տեղանքում (անտառ, տափաստան և այլն): Այս դեպքում կարելի է օգտագործել քարտեզի կիլոմետրային ցանցի ուղղահայաց գծերը կամ շրջանակի կողմերից որևէ մեկը: Քարտեզը շրջանակի կողմերից որևէ մեկով կողմնորոշելու դեպքում անհրաժեշտ է կողմնացույցը շրջանակի երկայնքով տեղադրել այնպես, որ կողմնացույցի զրոյական բաժանումը համընկնի շրջանակի հյուսիսային ուղղության հետ, իսկ 180 բաժանումը (հարավ) հարավային ուղղության հետ: Թողնելով կողմնացույցի սլաքի արգելակիչը, հորիզոնական հարթության վրա քարտեզը կողմնացույցի հետ շրջել այնպես, որ սլաքի հյուսիսային ծայրը շեղվի

դեպի մագնիսական խոտորման մեծությունը, որը նշված է շրջանակի ներքևի ձախ մասում:

Այդ դեպքում տեղանքում և քարտեզում եղած տեղանքի առարկաների բոլոր ուղղությունները պետք է համընկնեն:

Քարտեզի մի քանի թերթերը սոսնձելիս, այն ավելի հարմար օգտագործելու համար ծալում են, սակայն, այդ դեպքում կողմնորոշումը շրջանակի կողմերի միջոցով անհնար է, քանի որ դրանք գտնվում են ծալվածքում: Այդ դեպքում քարտեզը կողմնորոշելու համար կողմնացույցը տեղադրում են կիլոմետրային ցանցի ուղղահայաց գծերից որևէ մեկի վրա, բայց այս դեպքում անհրաժեշտ է նկատի առնել ուղղության ճշգրտումը (մագնիսական միջօրեականի և կիլոմետրային ցանցի ուղղաձիգ գծի հյուսիսային ուղղության միջև գոյացած անկյունը):

ԵՋՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

Ամփոփելով վերոգրյալը՝ կարող ենք ասել, որ զինված ուժերում ռազմական տեղագրությունը մարտական պատրաստության կարևոր առարկաներից մեկն է:

Առանց տեղանքի տարատեսակների, դրանց մարտավարական հատկանիշների իմացության, ինչպես նաև տեղանքում կողմնորոշվելու, տեղագրական քարտեզ կարդալու և տեղանքը գնահատելու կարողության հնարավոր չէ հաղթել ժամանակակից համազորային մարտում:

Տեղանքի մարտավարական առանձնահատկությունների հմուտ օգտագործումը նպաստում է ստորաբաժանումներին առաջադրված մարտական խնդիրների հաջող լուծմանը, այդ իսկ պատճառով տեղանքը մարտական իրավիճակի կարևորագույն մասնիկներից է:

Յուրաքանչյուր տեղանքում գործելիս զորքերի մշտական մարտական վարպետության բարձրացումը պահանջում է գիտելիքների հետազա կատարելագործում և ունակություններ ռազմական տեղագրությունից:

Տեղանքի ուսումնասիրման եղանակների իմացությունը, դրանում կողմնորոշվելու հմտությունը տարբեր պայմաններում, գիշերը, ցերեկը, սահմանափակ տեսանելիության ժամանակ նպաստում են տեղանքի բարենպաստ հատկությունների ճիշտ օգտագործմանը մարտում հաջողության հասնելու համար, օգնում արագ ու վստահ կողմնորոշվել և պահպանել հանձնարարված շարժման ուղղությունը երթի և մարտի ժամանակ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. «Ռազմական տեղագրություն» դասագիրք, ՀՀ ՁՈՒ գլխավոր շտաբ, գնդապետ Գ.Ա.Մանուկյանի հսկողությամբ, տպագրվել է «ՍԻՄ տպագրատուն» ՍՊԸ-ում, Երևան 2008:
2. «Քարտեզագրություն» ուսումնական ձեռնարկ, Հ.Ա.Բաբայան, Վ.Ա. Մեթանջյան, ԵՊՀ հրատարակչություն, Երևան, 2019:
3. Հայերեն ռազմական տերմինների բացատրական բառարան, Լ.Վ.Քոթանջյան, Ս.Ե.Ներսիսյան, Հեղ.հրատարակություն, 2006:
4. https://hy.wikipedia.org/wiki/%D5%8C%D5%A1%D5%A6%D5%B4%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6_%D5%BF%D5%A5%D5%B2%D5%A1%D5%A3%D6%80%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6 կայք, օգտվելու ամսաթիվը 17.10.2022:
5. <https://www.dasaran.net/apps/wiki/view/id/14230> կայք, օգտվելու ամսաթիվը 17.10.2022: